ԱՐՄԵՆԻԱ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պարսկաստանի համար տարեկան 10 ֆր. և կամ 4 րբլ. թղթդրմ.
Եւրոպաի և այլ տեղերի համար տարեկան 20 ֆրանգ
Ցնօրէնութիւնն ինք կը վճարէ լրագիրը ղրկելու փոստի ծախքը։
Բաժնեգիրները կանխիկ կը վճարուին։ Վեցամեայ կամ եռամեայ բաժնորդութիւնները ալ կընդունուին, առանց սեւէ յաւելման բաժնեգինին վրայ։ Հատով կը ծախուի ամէն տեղ 20 սանթիմ

Նամակ և ծրար պէտք է ղրկել հետեւեալ հասցէով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France)

6 ՏԱՐԻ ԹԻՒ 36

1889 ԴԵԿՏԵՄԲԵՐ 21

ԴԵԿՏԵՄԲԵՐ 9 (Հ. Տ.)

ՁԱՅԱՆ

Կը հրատարակուի Դշ. և Շբթ. օրեր

ՊԱՏՄԱՆԵՆԵՐ

Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւնները։
Պարտաւոր չէ վերադարձնել չհրատարակուած ձեռագիրներն։
Յանուցմունքներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։
Յանուցման 1 միջակ գիրը 1 սանդիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանդիմ։

Les annonces, en français et en arménien, sont reçues aux bureaux de la Rédaction (Rue Vacon, 50)

ՀԱՑՑՈՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

==

ՆՊԱՏԱԿ ԵՒ ՄԻՋՈՑՆԵՐ

(Շարունակած կանոնագրեն)

«Հայոց Հայրենասիրական Միութեան» նպատակն է աշխատիլ վարչական բաբենորոգումներ մտցունելու Թիւրքահայաստանի մէջ, Հայ ժողովրդի տեղական պէտքերին համեմատ։ Հայ ժողովրդի ցանկութիւնն է իրաւունք ստանալ ազատօրէն ինքզինք կառավարելու որոյ միայն պիտի կրնան վերնալ այն հարստահարութիւնները որոնք այսօր Հայաստանի թշուառութեան և աւերակ դառնալուն պատճառ կը լինին։

«Հայոց Հայրենասիրական Միութիւն»ը իւր նպատակ իրագործելու համար իւր կարողութեան չափով կը գործադրէ ամէն յարմար եղած միջոցներն, ժամանակի պահանջներին համեմատ կաշխատի ներքին ոյժ գոյացունել Աղգին մէջ իւր աղատութեան համար, հրատարակութիւններ կանէ, դիմումներ կանէ որոց որ պէտք է և նիւթապէս ու բարոյապէս կը քաջալերէ անոնց որոնք անձնուիրութեամբ կաշխատին հայրենիքի աղատութեան գործին։

Միութիւնը կունենայ իրեն բերան եղող լրագիր որ, բայի զանազան լուրեր տալէ իրրեւ լրագիր, կը հաղորդէ ընդհանրութեան ինչ որ Միութիւնը ուղէ հաղորդել, տեղեկութիւններ կուտայ Հայաստանի և տարբնակ Հայերի դրութեան վրայ և կը ծառայէ հայրենասիրական եռանդը արծարծելու Հայերին մէջ։*

Ծանօթ. «Հայոց Հայրենասիրական Միութեան» անդամակիցի կամ թղթակիցի ուզողներն պէտք է դիմեն հետեւեալ հասցէին.

M. Portoukalian
(FRANCE) Marseille

* Հայոց Հայրենասիրական Միութիւն»ը կը նպատակ Արմինիա լրագրի հրատարակման։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թիւրք կառավարութիւնն եւ Մուսան կամ գայլերուն դատավարութիւնը. — Պր. Ձիւմբս Պրայսի ատենաբանութիւնը. — Պր. Մ. Զերազ եւ Պր. Ճ. Ֆէրկիւսըն. — Թիւրքիոյ բաժանման մասին «Մանչէսթըր Կարտիէն»ի տեսութիւնը. — Հայեր ի Թիւրքիա. — Ռոմանիոյ Հայերի Այցելու Հովիւը. — L'Arménie լրագիրը. — Ծախուց գիրքեր. — Խմբագրական ազդ. — Փոստը Թիւրքիոյ մէջ. — Կրէտական գործերը. — Արտասահմանի լուրեր. — Ծանուցումներ։

ԹԻՒՐՔ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆՆ ԵՒ ՄՈՒՍԱՆ ԿԱՄ ԳԱՅԼԵՐՈՒ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Երկաթի կտոր սուրը ի՛նչ մեղաւոր է, երբ անօրէն ձեռք մը զայն անմեղի մը կող կը մխէ։ Մի՛ զայրանաք եթէ ըսեմ թէ Մուսան ի՛նչ յանցանք ունի, երբ կառավարութիւնն է ինք գործածող։ Ամեն անանձ որ փորձառութեամբ կը ճանչէն Թիւրքաց պետութիւնը, Մուսայի դատավարութեան խայտառակ եղանակին այս առնմօտ վախճանին վրայ չպիտի զարմանան։ Արդէն մենք նախապէս գիտէինք ըսելիքը երբ գայլերն էլին գպռնութիւններու դատաւոր և դատախազ։

Եւ ո՞վ է Մուսան.

Մին այն բազմաթիւ արտօնեալ աւազակապետներէն, որոց նուիրական պաշտօնն է կեավուրներու՝ Հայ քրիստոնէից կեանքն, պատիւ և ըստացուածքն բռնաբարել Մուհամմէտի փոխանորդ Խալիֆայի պաշտպանութեան և վարձատրութեան չնորհացն արժանանալու համար։ Մուսան իր հօր, իւր պապու հարազատ զաւակն է, գող, աւազակ, մարդասպանութեան արհեստին մէջ կրթեալ և օժտեալ և ահա այս արհեստի չնորհիւ պէյ, խանիւտան է և կառավարութեան աչքին լոյսը։

Անկոչիկ և անվարտիք այս տեսակ խանիւտաններով լի է Հայաստան, որոնք սակայն տէրութեան հրացան մը ունին իրենց անթէն կախած և հայ մարդ որսալով միայն կապրին, այլ որսին պարարակ մասերը հրացանի տիրոջ կերթայ, իսկ ոսկերտիք այդ չանց։

Ի սկզբանէ մինչեւ ցարդ մեր աղգին կրած անօրինակ աղէտներուն ի մօտոյ և անձամբ փորձառու, այլ և նոր փորձի, նոր համոզման պէտք չունինք կրկնելու համար թէ անօրէնութեան և չարեաց կեդրոն Պոլիսն է, բ. Դուռը, հետեւապէս և կուսակալները, կառավարիչները, դատարանները. թէ զմեզ ուղղակի հարստահարողը Թիւրք կառավարութիւնն է։

Եթէ եւրոպական կառավարութիւններն տեսնելով և գիտնալով գայս ամեն, կոյր կը ձեւանան ըստ իրենց շահու պահանջման, մենք մեր միտք և աչք բանալու, մեր ձեռքով մեր գործ տեսնելու ենք. «Օտարի աչք մեզ լոյս չտար» կըսէ աղգային առածն։

Գալով դարձեալ Մուսային դատաստանի ենթարկելու մասնաւոր պատճառներուն և դատավարութեան խայտառակ եղանակին, լուչելու ենք սովալուկ գայլերու դատաստանին մատնուած գառնուկներու առածը։

Սուլթան կամ բ. Դուռը դիտելով այն մեծ գայթակղութիւն որ կրնար ծագուիլ եւրոպիոյ մէջ Հայաստանի հարստահարելոց մասին, ակամայ պիտի ջանայ անթիւ ոճրագործներէն մինն դատաստանի ձեռակերպութեանց ենթարկել, նախապէս անոր անմեղութիւնն հաստատելու որոշմամբ։

Մուսան դեռ Պոլիս չհերծած, թիւրք թերթերն սկսեցին գինքն պիգատէ և խանիւտան անուանելով հասարակ տեղւոյն աւազակն մեծցնել, ի բաղէշ և ի Մուշ պաշտօնական համակրանաց յոյցերը ընել, որով և ուղղակի սպառնալիք այն զրկեալ խեղճ գիւղացւոց որ կը համարձակին կառավարութեան պաշտպանեալ գործակատարին դէմ ամբաստանութիւն ընել և վկայութիւն տալ։ Մուսան Պոլիս հասնելուն պէս իր աղգակից Պահրի փաշայի տան հիւր կըլլայ և առ առաւելն հարկահաւաքի պաշտօն միայն կատարած Մուսան, իւր կեանքի և երազի մէջ չտեսած փառաց և պատուոյ կարժանանայ պալատի և կառավարութեան կողմանէ։ Այս միջոցին արդէն գինքն դատող դատաւորներն իրեն խոնարհ ծառայութեան ենթարկուած էին. իրեն պէտք եղած խորհուրդ և հրահանգ տալով ամեն վստահութիւն ներշնչած էին իրեն։

Դիտելու է որ երբ ի գաւառս որեւէ հայ քրիստոնեայ մը թեթեւ յանցանքով մը ամբաստանուի Մահմետականի մը կողմանէ, անմիջապէս առանց նախնական հարցաքննութեան չզինուորներ բանտ կը նետեն և ամիսներ կը տեւէ դատաստանի ենթարկելու համար և ատենպ խաւարչտին բանտի մէջ կըմեռնի առանց տեսէ հարցաքննութեան. իսկ Մուսան, հազար ու մէկ ոճիրներու հեղինակ, արձակ հաւարձակ արտաւոր ընդունելութեանց կարժանանայ մինչև դատաստանի օր։

Այլ ի՞նչ կը լինի Մուսան ամբաստանող Մուշեցի գիւղացւոց վիճակը. Նախ կառավարութեան մասնաւոր դիտումն կը լինի երգանք գիւղի ամբողջ բնակիչներն, մօտ 300 հոգի, Պոլիս բերել տալու ստիպելով, գիւղը պարպել աւերակ դարձնել, կամ թէ ստիպել որ իրենց ամբաստանութենէն հրաժարին. վերջապէս 40–50 անձ Պոլիս կուգայ, ամեն կողմէ սպառնալեաց և անարգանաց մատնուած ամիսներով անհնար թախտաւիլ մայրաքաղաքին մէջ, թողուլ իրենց պզտիկ ընտանիք և վարուցանքն անխնամ Մուշի գաշտին մէջ Մուսայի աւազակախմբին ձեռք. միւս կողմանէ կառավարութիւնն յատուկ լրտեսներու միջոցաւ հակոզութեան կենթարկէ անոնց չարժանի ի Պոլիս, մանաւորապէս այն նպատակաւ որ Հայերը օրապահիկի միջոց հայթայթել չի համարձակին անոնց, որով յուսաբեկ դառնան իրենց տեղ և Մուսայի և կառավարութեան վրէժխնդիր խրժդժութեանց մատնուելով իրենց ժեղք քաւեն։

Այլ կեդրոնական կառավարութեան այս դիտումն անյաջող կելնէ, երբ դեռ վերջին օրերս յուսահատ Մշեցին արգուհալ կուտայ Սուլթանին և այս պատճառաւ ձեծի և բանտի ենթարկուելով, վերջապէս կը ստիպեն կառավարութիւնն որ իւր ուղարկած դատաստանի ձեռակերպութիւնն վերցնէ։

Եղեռնագործ տեսեան կը հրաւիրուի Մուսան եւրոպական զգեստով, այսինքն գառան մորթով. Սուլթանի թիկնապահներ իւր շուրջն են։ Առաջին քննութենէն կսկսի կառավարութիւնը բացարձակ պաշտպանութիւն. աւելի ճիշդ, անաժօթ խայտառակութիւն։ Հոս ամբաստանեալ ոճրագործն ոչ թէ Մուսան է, այլ երգանք գիւղացիք։ Դատավարութեան օրէնքով հարցմանց կամ քննութեանց միակ իրաւունքն ունի պաշտպանը։ Ամբաստանեալ Մուսան կամ գայլերու դատաւորներն ոչ մի իրաւունք չունին։ Ամբաստանեալ Մուսան կամ գայլերու դատաւորներն ոչ մի իրաւունք չունին։ Ամբաստանեալ Մուսան կամ գայլերու դատաւորներն ոչ մի իրաւունք չունին։

բաւունքն Նախագահին վերապահեալ է· արդ այս դատին սկիզբէն մինչեւ վերջ, ոչ միայն Նախագահ մոլլան, այլ և Ընդհանուր դատախազն ստեպ և խառն չփոթեցուցիչ հարցումներ կուղղէ արդէն երկիւղով և սպառնալեօք չուարած ու չփոթած ազէտ գիւղացւոց, այլ և Մուսայի փաստաբանները, այլ և դատարանի գրագիրն ... իրարու վրայ և ուղղակի հարցումներ կընեն, մերժելով միանգամայն ամբաստանողաց միակ փաստաբան Թընկըրեանի պաշտօնն որ արդէն գիտնալով թէ որո՛ւ դէմ է իր դատաստան ամենայն խոհեմութեամբ քանի մը բառեր կարտասանէ, մեծ ման Սուլթանի մաղթանք, և կը լռէ...

Եւ որ զարմանալին է, Մուսայի փաստաբանութիւն կընեն ոչ միայն Նախագահն, Ընդհ. դատախազն և այլք, այլ և Բաղէշի Ընդհ. դատախազն Իզզէթ պէյ որոյ պաշտօնավարութեան ժամանակ Մուսան իր սոսկալի արհեստն գործադրած է և մանաւորապէս պաշտպանուած է...:

Մուսան գրեթէ երբէք հարցմանց կամ քննութեանց չենթարկուիր, ըզգուշանալով թէ չըլլայ որ բանուի, այլ ինչ որ հրահանգած են նախապէս, ղայնս կը կրկնէ·

Նախագահն կը բաւականանայ հարցունելով. Անունդ ի՞նչ է·

— Մուսա·

— Ո՞րտեղացի ես· — Մուշեցի·

— Գործերնի՞դ· անզուգտ ձողեր ունիք...

Այսպէս Նախագահ մոլլան կը կանխէ պատասխան պատրաստել Մուսայի համար որ արձիննալով կը պատասխանէ. — Ագարակ ունիմ·

Այս ամբողջ Մուշի գաշտն իրեն ագարակն է, եթէ ոչ իրօք բան մը չունի այդ թափառական աւազակ·

Եւ յետոյ երդում կընէ թէ՝ ամենը սուտ զրպարտութիւն է ըրած՝ նին, թշնամութիւն ունին իրեն դէմ· երդում ընելն արդէն սովորական է քիւրա ոճրագործաց, բայց Նախագահն չիհարցներ թէ այս խեղճ գիւղացիք ի՞նչ պատճառ ունին քեզ դէմ թշնամութիւն կամ զրպարտութիւն ընելու· Ընդհանուր դատախազն մինչեւ վերջ կը պապանձի· ընդհակառակն իր բոլոր տաղանդ և պերճախօսութիւն կը թափէ անլեզու, ազէտ և անպաշտպան գիւղացւոց դէմ որք Մուսայի ներկայութեան և Սուլթանի և դատաւորաց պաշտպանութեան երկիւղէն պաշարեալ կը չփոթին· Նախագահը, Ընդհ. դատախազը, Մուսայի փաստաբաններ և գրագիրն անգամ մանրաքննին և խառնիխուռն հարցմանց կենթարկեն զրկեալներն, ժամերու, վայրկեան. ներու, մեգրերու, սանդիմեգրերու, գոյներու, նկարչութեան գոյներու ստորաբաժանմանց, որոց վրայ երբէք գաղափար չունին և կը շուարին· Այսպէս դատաւոր և դատախազն, Մուսայի փաստաբանք և գրագիրք, ամենքը մեծ գործի վրայ են Սուլթանին և կառավարութեան հաճոյական պարտականութիւն կատարելու համար·

Եւ որ անհանդուրժելին է, որչափ կարելի է խնդիրն անկարելիութեան մէջ փակելու համար, կը ջանան ուրիշ շատ վկայներու պէտք պահանջել, այն չար դիտմամբ, որ Արտունք գիւղի մէջ ծեացեալ ամբողջ գիւղայիք կամ Պօլիս բերելու վիճակին դատապարտեն և գիւղն աւերակ դառնայ, կամ իրենց այս վկայութիւն անբաւական համարելով խնդիրը ի նպաստ Մուսային փակեն·

Վերջապէս այս ձեւ ողբակատակ և խայտառակ դատավարութեամբ, Մուսան այս առաջին ամբաստանութեանց մէջ անպարտ կը հրաւարակեն, «կեցցէ՛ արդարասէր Սուլթանն» աղաղակելով·

Անշուշտ դատավարութեան այս եղանակէն ու վախճանէն վերջ, ո՛վ պիտի համարձակի չարունակել ծեացեալ անթիւ եղեռանց քննութիւնն·

Արդ, երեւակայեցէք, եթէ Պօլսոյ մէջ արդարութեան դատարանն այսչափ անարդար է և անամօթ, հապա գաւառաց դատական վիճակը ի՛նչ աննկարագրելի ղեժմանց մատնուած է և ի՛նչ կը լինի այսուհետեւ կառավարիչներու, դատաւորներու և Մուսաներու ընթացքն հանդէպ հայոց···

Ուրիշ կէտ մը· ամեն ոք գիտէ Պօլսոյ կամ մանաւորապէս Հայոց վիճակը· ամեն մարդ, ամեն ընտանիք կարծես պաշարման հսկողութեան ենթարկուած է· լրտեսութիւնն ու մատնութիւնը քաջալերեալ մասնաւոր արհեստ, հացի խնդիր դարձեր է, յամենուրեք և յամենայնի, ժողովուրդ և ժողովներ, լրագրութիւն և խօսակցութիւն պալատէն կառավարուող սանսիւռի խիստ հսկողութեան ենթարկուած են· Սակայն Թիւրքայ լրագիրները ինչպէս ամեն խնդրոյ մէջ, մանաւորապէս Մուսայի խնդրոյն մէջ ազատ թողուեցան յախուռն յարձակումներ ընելու Հայոց դէմ· իսկ Հայոց պատրիարքարանը, լրագրութիւնն և ժողովուրդը, համբերութեան դատապարտած···

Անիծա՛լ երկիր, անիծա՛լ կառավարութիւն, ուր «չունէրն արձակ թողուցած են և քարերը կապած»···:

16 դեկտ· 1889

Պրուքսէլ (Շարունակելի)

ՓՈՁԱԿ

ՊՐ. ՃԷՅՄԸՍ ՊՐԱՅՍԻ ԱՏԵՆԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Անգլիոյ Հանրային Խորհրդարանի հայասէր անդամ Պր. Ճէյմըս Պրայս, իր Ապէրտինի (Սկովտիա) ընտրողներին առջեւ վերջերս մի ընդարձակ ճառ արտասանելով, երկարօրէն խօսած է նաեւ հայհնական խնդրի մասին· Անգլիոյ արտաքին գործերի նախկին դեր–նախարարը բուռն կերպով բողոքած է Թուրք կառավարութեան խստիւժուժ վարմունքին դէմ, և ժողովուրդը մեծադղրդահարութիւններով ընդուներ է այս հայասիրական յայտարարութիւնները·

ՊՐ. Մ. ՉԵՐԱԶ ԵՒ ՊՐ. Ճ. ՖԷՐԿԻՒՍԸՆ

Մեր Լոնտոնի թղթակից կը գրէ մեզ հետեւեալը·

«Կը լսեմ թէ Պր. Մինաս Չերազ, իւր թերթին հրատարակութեամբը չը չատանալով, որոշած է հայկական խնդրոյ լուծմանն աշխատիլ եւրոպական դիւանագիտութեան անձամբ ալ դիմելով· Իբր սկզբնաւորութիւն, «Լ'Ադմէնի»ի խմբագրապետը եւրոպական դեկտ. 17ին Անգլիոյ արտաքին գործոց պաշտօնատունն (Ֆորին Օֆիս) երթալով, ուր 1878ին յաճախած է արդէն իբր Պատրիարքարանի պատուիրակ, արտաքին գործոց դեր–նախարար Սըր Ճէյմըս Ֆէրկիւսընի հետ մէկ ժամ տեւող ընդարձակ տեսակցութիւն մ'ունեցեր է հայկական խնդրոյն նկատմամբ, յոյժ սիրալիր ընդունելութիւն մը գտնելով· Կը կարծեմ դիտնալ թէ այս տեսակցութեան արդիւնքը փոխադարձաբար գոհացուցիչ եղած է·»

ԹԻՒՐՔԻԱՅ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ «ՄԱՆՉԷՍԹԸՐ ԿԱՐՏԻՆ»Ի ՏԵՍՈՒԹԻՒՆԸ

Մանչէսթըր կարտիեն իւր նոյ. 20 թուի խմբագրականին մէջ Սըր Ճէյմըս Ֆէրկիւսընի ի Տարթֆօրտ ըրած բանախօսութեան մասին հետեւեալները կը գրէ·

«Սըր Ճէյմըս Ֆէրկիւսըն շատ ճարտարօրէն փորձեց համայն Արեւելեան խընդիրն կարճ դատաստանով մը փակել· Օսմանեան կայսրութեան գաւառներն ներկայացուց իբր երկիրներ որոնք միջազգային նախանձի առարկայներ լինին· Ասի ամբողջ խնդիրն ծուռն է· Սակայն արտաքին գործերի խորհրդականն չգիտնալ կը ցուցնէ թէ այս միակ պարբերութեամբ Լօրտ Սալիսպըրիի քաղաքականութիւնն ոտնակոխ կընէ և ազատականների համոզմունքներուն կը մօտենայ· Սըր Ճէյմըս Ֆէրկիւսըն ընդունելով թէ կայ Միջազգային հակառակորդութիւն մը որի կէտ նպատակին են Պալքանեան գաւառները, Հայաստանն և Կրէտէ, կապացուցանէ թէ օսմանեան կայսրութիւնն դատապարտեալ է, թէ իւր ընչաոսպառութիւնն ժամանակի խնդիր է միայն և թէ ուշ կամ կանուխ «հիւանդ մարդ»ին ստացուածքն ուրիշների ձեռքն պիտի անցնին· Այս իրողութիւն վերջնականապէս կը դատապարտէ Թիւրքն ի նպաստ Թիւրքին պաշտպանելու քաղաքականութիւնը· Այդ քաղաքականութիւն վերջ չունի և անհնարութեան կարգը անցեր է· Ուրեմն եթէ Թիւրքը չկրնար ժառանգորդ մինել, իւր ստացուածքն պէտք է որ ուրիշներ ժառանգեն· Մեծն Բրիտանիան Թերեւս ժառանգութեան բաշխման պաշտօնն կը ձգէ անոնց որք վերաբերութիւն ունին այդ խնդրին և կամ կը բաղձան մինել ժառանգորդներէ մին· Կան շատ անձեր որք կը կարծեն թէ ժառանգաբաշխութեան պաշտօնն տհաճելի է, մանաւորապէս երբ բազմաթիւ ժառանգաբաշխներ կան· Այդ անձեր Մեծն Բրիտանիայի խորհուրդ կուտան ունենալ չեզոք քաղաքականութիւն մը· Տարակոյս չկայ որ ասի ուղղութիւն մ'է որ ամենէ քիչ նեղութիւն կը պատճառէ· Որովհետեւ երեք կարգ պահանջողներ կան· նախ Թիւրքիայի մէջ բնակող ժողովուրդներ որոնք այնտեղ բնակած են Թիւրքերին Եւրոպա մտնելէն շատ առաջ և պիտի չարունակեն կանգուն մնալ Թիւրք կայսրութեան դադրելէն վերջ իսկ· Ազատականների տեսութեամբն այս ժողովուրդներ են բնական ժառանգորդներն· եթէ Անգլիոյ ձեռնարկէ նախագահել կամ միանալ Օսմանեան գաւառներն բաշխման գործողութեան, Ազատական կուսակցութիւնը կը պահանջէ որ Անգլիան գործէ այս բուն ժառանգորդներուն ի նպաստ: Միւս պահանջողներ են մի կողմանէ Ռուսիա և միւս կողմանէ Աւստրիա· Այս տէրութիւններէ իւրաքանչիւրն ալ իրեն կը յատկացնէ մի բնական կամ երկնուստ որուած իրաւունք մը Թիւրքի կօշիկներուն մէջ քալելու· Եթէ Անգլիա հրաւիրուի միջամտելու, բան մ'որ տրամաբանական է գէթ, իւր գործն պէտք է մինի Ռուսիայի և Աւստրիայի անիրաւ պահանջմունքները առ ոչինչ հանել: Իսկ Անգլիա ինքն մի պահանջ չունի այս երկիրներուն մասին· Արդարութեան և իրաւունքի ջատագով մինելու համար միայն Անգլիա իրաւունք ունի Արեւելեան խնդրի մէջ խառնուելու: Կայ հին վարդապետութիւն մը թէ «Կ. Պոլիսն ուրիշ տէրութեան մը ձեռքն անցնելով, Բրիտանական կայսրութեան հնդկական չահերին մի վտանգ կսպառնայ· հետեւապէս Անգլիա մի բարոյական պահանջ կունենայ այդ քաղաքն իրեն յատկացնելու:» Տեսութիւն մ'է այս որ երբէք լրջօրէն չէ պաշտպանուած· Եթէ արդարեւ կայ այդ մասին անգլիական քաղաքականութիւն մը, այդ ալ միայն պէտք է լինի Աւստրիան և Ռուսիան պալքաններէն հեռի և դուրս ձգելու քաղաքականութիւն: Այս՝ երբեակ դաշնակցութեան քաղաքականութիւնը չէ, այն պատճառով որ Ամանիա ստիպողական չահեր ունի: Ամանիայի նպատակն է իւր դրացիներին վճճն յետաձգել և նոյն միջոցին օսմանեան կայսրութեան մէջ ամանական չահեր ստեղծել: Պերլինի կառավարութիւնը բացարձակապէս անտարբեր է Թիւրքիայի ժողովուրդներուն այս պահանջին թէ իրենք տէր պէտք է լինին իրենց ճակատագրին· Ռուսիայի և Աւստրիայի միջեւ մի բաշխում իրեն չահերին կը նպաստէ, անտարակոյս այս պայմանով միայն որ Ռուսիա առիւծի մասն չառնու· Ամանիայի չահն է որ այսպիսի բաշխում մը մի պատերազմ չյարուցանէ, զի այդ պարագային մէջ ինքն ալ պիտի ստիպուի պատերազմի մէջ մտնել: Իտալիա, «երբեակ դաշնակցութեան» երրորդ անդամն, նմանապէս անշահախնդիր չէ: Իտալացիներն Ադրիականի արեւելեան եղերքներին վրայ աչք ունին, զորս կը պահանջեն· որովհետեւ ատենօք Իլլէրիան Հռոմէական գաւառ մ'էր և թէ մինչեւ այսօր իտալերէնն կը խօսուի անդ· Բայց այս պահանջ այնքան միայն իրաւացի է որքան Իտալացիներուն պահանջն Ադրիանական Հանրապետութեան երկիրներուն վրայ»·

ՀԱՑԵՐ Ի ԹԻԻՐՔԻԱ

Ազգային ժողովի թ նիստը տեղի ունեցեր է դեկտ· 1/13ին, Մ· Պատրիարքն նախագահեր է, ներկայ եղած են նաեւ Ամեն· Երիւժան Հայրիկ, Խորէն Նարպէյ արքեպիսկոպոս և ուրիշ եպիսկոպոսներ, 50է աւելի եկեղեցականներ·

Ատենական գործողութիւններէ ետք՝ Կաթողիկոսական խնդրին անցեր է ժողովը· Կաթողիկոսական Հրդարանական Ճանձնաժողովը իր բերած տեղեկագիրը կարդացեր է որէ եղրակացութիւնն էր պատուիրակ մը ղրկել Վեհ· կաթողիկոսին քով որ բերանացի կատարէ պէտք եղած բանակցութիւններն Պալանճէնիայի խնդրին կարգադրութեան համար· Ճանճնաժողովի և Վեհ· Կաթողիկոսի միջեւ փոխանակուած գրութիւնները լսելու

և առոր հաւանական որոշման գալու համար ժողովը որոշեր է դռնփակ նիստ մ'ալ ընել Պ՚ննդեան տօներէ ետք և զբաղիլ այդ խնդրով։

Ժողովը նկատի առեր է նաեւ իր նիստերի «Մեծամասնութեան խնդիրը» և ընդուներ է Ներքին Կանոնադրի ցանկաժողովին խմբագրած հետեւեալ կանոնները. թէ «Ազգային ժողովի առեանը բացուի երբ որոշեալ ժամին 36 անդամներ ներկայ են և առենական գործողութիւնները կատարուին. իսկ Օրակարգի խնդիրների որոշման համար՝ ընտրուած և պաշտօնի վրայ գտնուող երեսփոխանների թուին կէսէն գէթ մէկ աւելի անդամներ ներկայ գտնուելու են»։ Այնուհետեւ նիստը վերջացեր է։

—Պատրիարքական փոխանորդ Գերդ. Գէորգ վարդապետ Իւթիւճեան Կարնոյ Առաջնորդ ընտրուած լինելով, թառն ժողովը Պատրիարքական փոխանորդ կարգած է այժմ Գեր. Ներսէս Վ. Աւետեանն որ երբեմն Բէյրայի քարոզիչ եղած, յետոյ Պատրիարքական տեղապահի պաշտօնով եւ դիվիա դնացած էր և վերջերս ալ նոյն պաշտօնով Տրապիզոն կը գտնուէր։

ՐՈՒՄԱՆԻԱՅԻ ՀԱՅՑԵՐԻ ԱՅՑԵԼՈՒԹ ՀՈՎԻՒՆ

Կ. Պոլսի Ազգային Թառն ժողովը իր նոյ. 24/դեկտ. 6ի նստի նստին մէջ որոշեց Րումանիայի ազգայիններին այցելու Հովիւ կարգել Աբժ. Տ. Գէորգ Վ. Երեցեան որ Երուսաղէմի միաբան է։

L'ARMÉNIE ԼՐԱԳԻՐԸ

Շնորհակալութեամբ ստացանք l'Arménie (Արմէնի) լրագրի 2րդ Թիւը որ Մեծ. Պր. Մինաս Զերազ խմբագրապետութեամբ սկսած է հրատարակուիլ Լոնտոնի մէջ։ Ինչպէս կը տեսնուի, l'Arménieի հրատարակութիւնն այնպէս կանոնաւորուած է որ ճիշդ ժամանակին կը հրատարակուին թիւերն յաջորդաբար։ Այս երկրորդ թուի պարունակութիւնն է. 1. Բննադատութիւն մը լորտ Սալըզպըրիի ճառին որ վերջերս արտասանեց Կիւիլտհոլլի խնջոյքին մէջ. 2. 1878 յունիս 24ին Հայոց պատուիրակութեան Պէրլինի մէջ լորտ Սալըզպըրիին տուած մէկ ազգու և հետաքրքրաշարժ գրութիւնը և լորտին կողմէ տրուած պատասխանը. 3. Պր. Կըլատսթոնի խօսած ճառը Մանչէսթըրի մէջ. 4. Հարստահարութիւնների մի տեղեկագիր, Պէրլինի դաշնագրի 61րդ յօդուածին առթով. 5. Նորանոր խժդժութիւններ. 6. Սասունի ապստամբութիւնը. 7. Եւրոպական մամուլն և l'Arménie. 8. Մեծ. Պր. Կ. Յակոբեանի գրած մէկ նամակը l'Arménieի խմբագրապետին. 9. Հայոց ժողովրդական ֆէքեաներ գեղեցիկ ոճով Ֆրանսերէնի թարգմանուած։

l'Arménieի տարեկան բաժնորդագինն է 10 շիլին (12 ½ Ֆրանկ)։ Բաժնորդ գրուիլ ուզողներն պէտք է դիմեն l'Arménieի խմբագրութեան հետեւեալ հասցէով.

Mr. Minasse Tchéraz, Rédacteur en chef du journal «L'Arménie».
42 Broomwood Road, Wandsworth Common,
LONDRES s. w.

ԾԱԽՈՒ ԴԻՐՔԵՐ

Արմէնիայի 4րդ երեսը ծանուցուած գիրքերեն զատ, Հայաստանի պատմութեան եւ աշխարհագրութեան վերաբերեալ հետեւեալ գիրքերն ծախու կը գտնուին Արմէնիայի խմբագրատունը։ Իրենց առջեւ նշանակուած գիներով կը դրկուին նաեւ Մարսէյլեն դուրս ամեն տեղ, փոստի ծախքը Արմէնիայի խմբագրատունեն վճարուելով։

Հ. Ղ. Ալիշան — Գատկերազարդ Աշխարհագրութիւն Նոր Հայաստանի (Բազմահմուտ Հ. Ալիշանի աշխատասիրութեամբն հրատարակուած այս աշխարհագրութիւն որ մեծադիր և երկիւեան 105 երեսներէ բաղկացած է և դիւրահասկանալի պարզ գրաբար լեզուով գրուած, զարդարուած է 35ի չափ պատկերներով որոց մէջ կը գտնուին Վան քաղաքի, Վանի բերդի, Պայազիտի, Էչմիածնի, Անիի զանազան նշանաւոր աւերակներուն և. պատկերներն։ Գրքին վերջը կը գտնուի բուն Հայաստանի, այսինքն Մեծ Հայքի, բոլոր քաղաքներուն, բերդերի, գիւղերի, լեռներուն, գետերուն մի ընդարձակ ցանկը ուր իւրաքանչիւրին առջեւ նշանակուած է թէ գրքին քանիերորդ տանը մէջ գրուած է անոր վրայ) ։ Գին 5 ֆր. և 50 սնթմ.։

—Հ. Ղ. Ալիշան— նշմարք եւ նշխարք Հայաստանի Ա, Բ և Գ պրակները (Հայաստանի հետաքրքրական տեղերէն և քաղաքներէն 36ին լուսանկար պատկերները զետեղուած են նշմարքի 3 պրակներուն մէջ, անոնցմէ իւրաքանչիւրին վրայ պատմական և աշխարհագրական հմուտ տեղեկութիւններով, աշխարհատար լեզուով գրուած Վեր. Հ. Ղ. Ալիշանէն)։ 3 պրակներն միասին 26 ֆր. և 50 սնթմ.

—Հ. Մ. Քաջունի—Աշխարհագրութիւն Հին եւ Նոր Հայաստանեայց — (Աշխարհաբար լեզուով գրուած և 298 երեսներէ բաղկացած այս աշխարհագրութիւն՝ համառօտ և ամփոփ կերպով տեղեկութիւնները կուտայ Նոր Հայաստանի և առաւելապէս Հին Հայաստանի վրայ որ չատ հարկաւոր է Հայոց անցեալ պատմութեան ծանօթանալ ուզողներուն)։ 2 ֆր. 50 սնթ.

—Հ. Ղ. Մ. Ալիշան — Հայկական աշխարհագիտութիւն (1881ին վենետիկ գումարուած Աշխարհագրական Հայագիտական ժողովին մէջ Հայաստանի աշխարհագիտութեան նկատմամբ Հ. Ղ. Ալիշանի կարդացած ընդարձակ և հմտալից ճառին թարգմանութիւնն է հայերէն աշխարհաբար լեզուով)։ 65 սանթիմ։

—Հայաստանի աշխարհացոյց քարտէզը ըստ նախնի աշխարհագրոյ, փորագրուած Վենետիկ, 92 հարիւրորդամեթր լայն և 70 հարիւրորդամեթր երկայն հաստ թղթի վրայ։ 4 ֆր.

Սիսուանի (Հին և Նոր Կիլիկիա) աշխարհացոյց քարտէզը, փորագրուած Վենետիկ 1885ին, 77 հարիւրորդամեթր լայն և 51 հարիւրորդամեթր երկայն թղթի վրայ։ 2 ֆր.

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱԶԴ

Ամերիկահ Հայերէն երբեմն յանձնարարութիւններ կը ղրկուին մեզ իրենց ազգականներուն ճանապարհորդութիւններին նկատմամբ։ Մենք աւելորդ ժամանակ չուներնալով չենք կարող զբաղիլ այդպիսի գործերով, բայց յանձնարարող հայրենակիցներին մի ծառայութիւն մատուցած լինելու հաճոյքով չենք մերժած մինչև այժմ կարելի եղածն անել։ Սակայն կը խնդրենք այդպիսի բարեկամներէ որ գոնէ մեզ աւելորդ աշխատանք և իրենց ալ նեղութիւն չլինելու համար կանոնաւոր գործ կատարեն, երբ կը ստիպուին այդպիսի յանձնարարութիւն անել։ Օրինակի համար, ասկէ մէկ չաբաթի չափ առաջ Թարբերդցի Աբշակ անուն մի պատանի ներկայացաւ մեզ և իմացուց թէ Ուսթըրէն եկող ճանըորդներէ խմացած է որ 200 ֆրանգ ղրկուած է մեզ իրեն համար։ Յայտնեցինք թէ ո՛չ այդպիսի դուռմար եկած կայ մեզ Ուսթըրէն և ո՛չ ալ ատոր նկատմամբ ոեւէ նամակ։ Մարսէյլ գտնուող մի Հայ որ ճանապարհորդներին առաջնորդելու գործերով կզբաղի, 2 օր յետոյ մի հեռագիրը կը ստանայ Ուսթըրէն որմէ հետեւցուներով թէ 200 ֆր. կայ մեզ մօտ յիշեալին համար և նոյն միջոցին չկրնալով մեզ տեսնել, կը հանէ 200 ֆրանգ կուտայ Աբշակին և անմիջապէս ճանբայ կը հանէ որ ընկերներէն յետ չմնայ։ Յետոյ երկար բարակ հեռագիրներ փոխանակուեցան և հասկըցուեցաւ որ այդ գումար տեղիս վաճառատուններէն մէկին մէջ մնացած է եղեր, մեր անուն հեռագրական սխալմամբ այլափոխուած լինելով։

Մի քանի օր յառաջ ալ տեղիս Բօպէն Բօնտէլ դրամատունէն 50 ֆր. բերին յանձնեցին մեզ, ըսելով թէ Նիւ Եորքի Բիչարտ և Ընկ. դրամատունէն ղրկուած է մեր արամադրութեան տակ դրուելու համար։ Բայց ո՞վ է ղրկողն, որի՞ յանձնուելու համար կամ թո՞ւղ բանի համար։ Ոչինչ հաղորդուած է մեզ։

ՓՈՍՏԸ ԹԻՒՐՔԻԱՅ ՄԷՋ

Կ. Պոլսէն կը գրեն ֆրանսական լրագիրներուն թէ Թիւրք կառավարութիւնը դարձեալ սկսեր է բանակցութեան մտնել եւրոպական տէրութիւնների ներկայացուցիչներուն հետ, պահանջելով որ Կ. Պոլիս և Թիւրքիայի ծովեզերեայ քաղաքներն գտնուած օտար նամակատուները վակուին։ Դեսպանները սկզբնապէս հակառակ կեցուածք ունէին Թիւրք կառավարութեան թէ իրենք վստահութիւն չունին Թրքական փոստի կանոնաւորութեանը վրայ և թէ հետեւապէս եւրոպական պետութիւնների նամակատուները չպիտի կրնան վերցուիլ Թիւրքիայէն։

ԿՐԷՏԷի ԴՈՐՇԵՐՆ

Աթէնքէն կը հեռագրեն դեկտ. 17 թուականով հետեւեալը.

«Կրէտէի վիճակը նուազ դոհացուցիչ է. Կրետացի երեւելիներէն շատերը դուրս կը մնան ընդհանուր ներման ցանկէն։ Ասկէ զատ ներման հրովարտակը որ կարդացուեցաւ, կըզղուն շատ մ'արտօնութիւնները կը սեղմէր. մասնաւորապէս մաքսի վարչութիւնը Կրետացիներէն ձեռքէն կառնէ և տեղացի քրիստոնեայներէն այլ եւս թոյլ չտար ոստիկանութեան մէջ մտնելու։ Փոխարէնն կը խոստանայ նայ պանքաներ հաստատել Կրետէի մէջ, նաւահանգիստը ընդարձակել և.։

Կը խօսուի նաեւ որ Պ. Թրիքուբիս յայտարարած է Խորհրդարանին թէ Կրետէի ներկայ կացութիւնը կը ստիպէ դիւանագիտական ձեռնարկների դիմել Բ. Դրան կող։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼՈՒԻՐԵՐ

Դեկտ. 16 թուով կը հեռագրեն. Պուչիրի անունով նշանաւոր Ափրիկեցի ցեղապետը որ երկար տարիներ ի վեր քաջութեամբ Ալմանիայի գաղթականութեան դիմադրած էր Զանզիպարի կողմերը, իր թշնամիների ձեռք ընկած լինելով վերջապէս, կախաղան եղած է։

—Էնճլիւէնձա կամ տանկը աշխարհի չրջանն ընել մտադիր է. Եւրոպայի բոլոր մայրաքաղաքներ այցելեց. Վիէննայի և Պէրլինի մէջ կէս միլիոնը կանցնի վարակուողների թիւը։ Նիւ Եորքէն եկած լուրեր կըհաստատեն որ Ամերիկայի հողին վրայ ալ ոտք կոխեր է տանկը և կերեւի որ Նիւ Եորքի մէջ ալ բազմաթիւ պիտի լինին վարակուողները։

—Մեծ կամ փոքր դործադուլներ կը շարունակուին պատահիլ Անգլիայի և Ալմանիայի զանազան քաղաքները։

— Վիէննացին կը հեռագրեն թէ Զարի դէմ նոր դաւադրութիւն մ'երեւան եկած է. դաւադիրներէն մէջ գտնուած են երկու սպայներ։

— Ֆրանսացի անուանի հրապարակագիր Պ. Ռոշֆոռ ուղեզային կաթուածի ենթարկուեր է։

—Լոնտոնէն գեկտ. 18 թուով կը գրեն. Մօտ օրէն եգիպտական Մանսուրա չոգենաւը պիտի մեկնի Մոնպոզաէ իր հետ բերելով Սթանլի և Էմին։

—«Թայմզ»ի Դահիրէի թղթակիցը ուշադրութիւն կը հրաւիրէ Իտալիոյ դիտումին վրայ, որով սա կուզէ հաստատուիլ Աճիկի մէջ։ Թղթակիցը դիտել կուտայ թէ Սուտանի խնդիրը այսօր բոլորովին տարբեր վիճակ մը ունի. եթէ Իտալիա իր գերիշխանութիւն հաստատէ Ապիսինիոյ մէջ, ակներեւ է որ այնատեն Խարթում գըտնացող ամենակարճ ճանբան Մասուայի և Քասալայի վրայէն պիտի անցնի։ Մինչեւ այսօր Սուտան լքանելու կուսակիցները իրենց փաստ կը բերէին թէ Խարթումի մէջ ոեւէ ուրիշ տերութիւն չկրնար հաստատուիլ. բայց հիմա գործերն փոխուած են և անվիճելի է այլ եւս թէ քաղաքակրթ տերութիւն մը Խարթում գրաւել կարենալով իրապէս Եգիպտոսի տէրը պիտի դառնայ։

—«Սթանտարտ»ի կը գրեն Վիէննայէ թէ Զարը հասուն խորհրդակ-

ցուրեննէ մ'ետք մտածելը է թէ պէտք չէ որ բանակցութիւնները դուռ բանայ Պուլկարիոյ նոր փոխառութեան պարտատոմսերուն վիճննալի սակարանին մէջ ընդունուելուն համար։

— Անգլիոյ և Փորթուկալի մէջ վէճը կը շարունակուի դեռ Հարաւային Ափրիկեան ստացուածներուն բաժանման մասին։ Այս վերջինը որոշած է բոլոր ուժով պաշտպանել իր իրաւունքները, չնայելով որ հակառակորդը, Անգլիան, անհամեմատ զօրաւոր պետութիւն մ' է իր հետ բաղդատելով։

—Աթէնքէն «Սթանտարտ»ի ուղղուած հեռագրի մը նայելով, տակաւին կռիւներ տեղի կունենան կրէտէ կղզոյ մի քանի տեղերը ապստամբներուն և օսմանեան զօրքերուն միջեւ։

—Սթանլի պատասխանելով Զանզիպարցիներուն մի ուղերձին, յայտնեց որ մօտ ժամանակէն երկաթուղի մը պիտի ձգուի Մոնպոզայէն մինչեւ Վիկթորիա լիճը հեգրնական Ափրիկէ։

— Դեկտ. 19 Թուով Պետերբուրգէն կը հեռագրեն. Ձարը յանձնարարեր է Իզեվօյսքի անունով պալատականին որ Պաղին խոստում տայ թէ այսուհետեւ ռուս կառավարութիւնը քաղցրութեամբ պիտի վարուի լեհական գաւառներուն հետ որոնք մինչև այսօր բռնութիւնների կենթարկուէին կաթոլիկ կրօնին պատկանելնուն համար։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

ՏԻԱՐ ԸՄՓԷՆՍԸՐ ՀԱՄՔԸԼ

Փաստաբան և Հաշտարար Դատաւոր

405 Մէյն փողոց Խուց թիւ 119

Ուսքըր Մաս.

Սոյն փորձառու օրէնսգէտ պատրաստ է իւր ծառայութիւնն նուիրել ամէն անձնց օրք գործ կունենան Դատարանաց մէջ. պահանջները կըհաւաքէ ևն.։

ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՑՈՑՑ

1890 Թուականին

Տպագրութիւն Պաղտատլեան

Ներկայ տարւոյ ընդարձակ Օրացոյցը ճոխագոյն է և կը բաղկանայ 356 երեսէ։ Գինն 75 սանթիմ։ Փոստի ծախքը մէկտեղ։

ՕՐԱՑՈՑՑ

1890 թուականին Քրիստոսի

Տպագր. Գ. Պաղտատլեան (Ադրամեան)

Կ. ՊՕԼԻՍ

Կը ծախուի Մարսէյլ, Արմենիա լրագրի խմբագրատունը, հատը 25 սանթիմ. Մարսէյլէն դուրս կը պրկուի 30 սանթիմով, փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով։

Ինչպէս ամէն լրագիրները, Արմենիան ալ կընդունի ծանուցումներ հրատարակելու համար. անոնք որ պէտք կունենան Արմենիայի միջոցով մէկին դիմումներ անել կամ մի բան յայտարարել, պատրաստ ենք ընդունիլ իրենց ծանուցումները ըստ լրագրական սովորութեան։ Ծանուցումները դրի գիներն նշանակուած են Արմենիայի ճակատը, տառի վրայ հաշուելով. 1 երկաթագրի (գլխագիր) համար 2 սանդիմ և 1 բոլորգրի համար 1 սանդիմ։ 3 անգամ դրուելիք ծանուցումի գնին վրայ 0/0ին 10 զեղչ կը լինի. 10 և աւելի անգամներ դրուելիք ծանուցումի գնին վրայ 0/0ին 30 զեղչ։ Սակարկութիւն չընդունուիր։

ՏԵԱՐՔ ՄՕՐՍ ԵՒ ԸՆԿ.

ՍԵՂԱՆԱԻՈՐՔ

426 Մէյն, փիգենք փողոցի անկիւնը

ՈՒՍՔԸՐ (Worcester Mass.

U. S. America)

Սոյն դրամատան դիմող Հայերը՝ կ. Պօլսոյ և Քարբերդի մէջ անդրանիկան և գաղղիական օսմիով վճարելի փոխանակագիր կրնան ստանալ յոյժ չահաւոր պայմաններով։

Փորձեցէք և գոհ պիտի ըլլաք։

ՀԱՑՈՑ ՀԱՑԲԵՆԱՄՈՒԹԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Ա. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ

«Հայրենասիրական Միութեան» հրատարակած այս վարդապետարանի մէջ համառօտ կերպով բացատրուած է թէ իւրաքանչիւր հայրենասէր Հայ ինչ իղձեր պէտք է ունենայ և ինչ պարտքեր ունի կատարելու։

Գինն է 20 սանթիմ և կը ծախուի Արմենիայի խմբագրատունը։ Մէկ անգամէն 20 օրինակ գնողը կը վճարէ 3 ֆրանգ և 50 սանթիմ միայն, փոխանակ 4 ֆրանգի։ Փոստի ծախքը կը վճարուի «Հայրենասիրական Միութեան» կողմէն։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Է ԼԻՆԶԻ ՕՐԷՆՔԸ ՏԱՃԿԱՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(ՊԱՏԿԵՐ ՄՕՏԻԿ ԱՊԱԴԱՑԻՑ)

ԳՐԵՑ Մ. Պ.

(Այս տեսարակի մէջ ցոյց կը տրուի թէ բռնաւորներուն և ազգամատնիչ Հայերուն դատաստանը ի՞նչպէս պէտք է տեսնուի այնպիսի երկիրներուն մէջ ուր օրինաւոր և արդարադատ կառավարութիւն չկայ։)

Մէկ օրինակի գինն է 20 սանթիմ. 20 օրինակը 3 ֆրանգ և 50 սանթիմ։ Փոստի ծախքը կը վճարուի Արմենիայի խմբագրատունէն։

Հետեւեալ գիրքերն կարելի է ստանալ Արմենիայի խմբագրատունէն, իրենց առջեւ նշանակուած գիներով և փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով։

Աւժէ՛քը կանխիկ չվճարուած՝ գիրք չղրկուիր։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Ա. ՀԱՑ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻ ՄԸ (սպառած)։

Բ. ՀԱՑ ԳԻՒՂԱՑԻ (սպառած)։

Գ. ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՑԷԼԻ (Հայաստանի աղատութեան ցանկացող մի Հայի մաղթանքներն և մաածումներն են Սաղմոսի ոճով գրուած). 40 սնթմ.։

Դ. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՊՈՒԼՂԱՐԻՈՑ ԵՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՊՈՒԼՂԱՐ ԱՊՏԱՄԲԱՊԵՏԱՑ (Պուլղար ազգին իր աղատութիւն ձեռք բերելու համար մէկ գարէ ի վեր արած չանքերի խիստ հետաքրքրաշարժ նկարագրութիւնն է։) 1 ֆր. 50 սթմ.

Ե. ՀԱՑԱՍՏԱՆԻ ԹՇՈՒԱՌՆԵՐԸ. — (Հայաստանցիների թշուառութեան գլխաւոր պատճառներէն մին եղող պանդրխտութիւնը մեր ազգային նորընծեր վիպասանի գրչին նիւթ եղած է ՀԱՑԱՍՏԱՆԻ ԹՇՈՒԱՌՆԵՐԸ անուն վէպին մէջ։ Իրական կեանքէ առնուած այդ վէպ որ մասամբ կը հրատարակուէր Արմենիայի մէջ, առանձին տետրակով ևս հրատարակուած է այժմ և կը ծախուի Մեծ. Հեղինակին Պարոն Մկրտիչ Թիւթիւնճիֆֆի մօտ, ինչպէս նաեւ Արմենիայի խմբագրատունը)։

1 ֆր. 20 սանթիմ

Զ. ԴԱՄԱՌ ՔԱԹԻՊԱ—ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ յետ այբուբենն առարտեւլուն. (Մեծանուն Հայ բանաստեղծին վերջերս գրած ազատաշունչ ընտիր ոտանաւորներէն 3ը՝ որոնք իւր «Բանաստեղծութիւններ»ի հատորին մէջ չեն գտնուիր, առանձին տետրակով հրատարակուած են)։ Այս տետրակէ որի չահը բարեգործական մի նպատակի յատկացած է, 50 հատը մէկ անգամէն գնողին կը տրուի 50 հատը 2 ֆրանգ 50 սանթիմի, որ ըսել է հատը 5 սանթիմ կամ 10 փարա Թրքական։

Հատով կը ծախուի 0,10 սթմ.

ԻՄ ՀԱՅՐԱՍՊԱՆ ԸՆԿԵՐԸ

(Կ. ՊՕԼՍՈՑ ՀԱՑՈՑ ԿԵԱՆՔԷՆ ԱՌՆՈՒԱԾ ՄԻ ԻՐԱԿԱՆ ՂԷՊ)

ԳՐԵՑ ԱՊԼՂԱՐԻՊ

Այս հետաքրքրաշարժ գրուած կը ներկայացունէ ընտանեկան տխուր պատկերներէ մին ուր կը տեսնուի թէ անբարոյական մի հայր իւր ապականուած վարքուբարքով որչա՛փ չարիքներու պատճառ դարձած է և վերջ ի վերջոյ ինք ալ իւր որդւոյ ձեռքով սպանուած և անհետացած է աշխարհէ։

Կը ծախուի Արմենիայի խմբագրատունը, գին 1 ֆրանգ, փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով։

ՀԱՑ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՊԱՏԿԵՐԸ

1878ին Պէռլին գնացած Հայ պատուիրակութեան պատկերը՝ գեղեցիկ Թղթի վրայ առնուած և պատուիրակներուն անուններն հայերէն և ֆրանսերէն տառերով միանգամայն տպագրուած, կը ծախուի Արմենիայի խմբագրատունը։ Գինն է 1 ֆրանգ, փոստի ծախքն խմբագրատունէն վճարուելով։

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

—Բաֆֆի—ԿԱՑԾԵՐ Ա. եւ Բ. հատորներ (Ազգային առաջնակարգ վիպագիր Րաֆֆիի այս գիրք կը ծանօթացունէ ընթերցողը տաճկական և պարսկական Հայաստանի գլխաւոր տեղերին հետ, հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կուտայ քուրդերի զանազան ցեղերի և հայերի դրութեան վաքի և բարքի մասին։ Նա ցոյց կուտայ այն ծրագիրը որին պէտք է հետեւին Հայաստանի մէջ գործել ուզողներն։ Մի խօսքով, թէ՛ իբր ազգային ընտիր վիպասանութիւն և թէ՛ իբր հայրենասիրական գործունէութեան վարդապետարան և ծրագիր արժան է որ գտնուի այս գիրք ամէն հայրենասէր Հայի տունն։)

Գին Ա. հատորին (Թղթակազմ) 7 ֆր. Բ հատորին (Թղթակազմ) 8 ֆրանգ 50 սանթիմ։ Երկու հատորներն միասին 15 ֆրանգ։

— Ծերենց.— ԵՐՆՈՒՆԲ Թ ԴԱՐՈՒ (Ազգային անուանի վիպասան Ծերենցի գրած այս գիրք ցոյց կուտայ թէ մահմէտականներն Թ գարին մէջ Հայաստան արշաւելով ինչ բարբարոսութիւններ կը գործէին այնտեղ, ինչպէս և կը գործեն այժմ նոյն իսկ ԺԹ գարին մէջ։ ԵՐՆՈՒՆԲԸ իրրեւ օրինակ ցոյց կուտայ ազգային գործիչներին Սասունցի Ծոփնան անուն մէկը որ իւղուր բարձր տեղերէ ազգային վերկութեան աչնկալելէ յետոյ, վերջապէս ժողովրդին մէջ կը փնտռէ աղատութեան ոյժը և անոր կը յաջողի մի քանի յաղթութիւններ տանիլ թշնամիներին դէմ։) 3 ֆր. և 50 սնթմ.

—Րաֆֆի.— ՍԱՄՈՒԷԼ (Րաֆֆիի հրատարակած ազգային վէպերի վերջինն է այդ որի նիւթը առնուած է Դ դարի Հայերի կեանքէն և որ, բացի իւր ներշնչած ազատասիրական ըղգացումներէ, հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կուտայ այն ժամանակի Հայերի բարքերին, սովորութիւններին և այլնի վրայ։) 10 ֆր

—Գամառ Քաթիպա.—ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ. (Ազգային առաջնակարգ բանաստեղծ Ռ. Պատկանեանցի ազատաշունչ և հրահանգիչ բանաստեղծութիւնները կը պարունակէ. սիրոյն դրուած է հեղինակին պատկերը)։

2 ֆրգ։

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ
Le Gérant : FÉLIX ENFFANTIN.

ՄԱՐՍԷՑԼ

Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի
Marseille. — Imprimerie du Midi, M. SCHICKLER
rue Vacon 50.